

# ՆՎԻՐՎՈՒՄ Է ՄԱՇՏՈՅՅԱՆ ԳՐԵՐԻ ԱՐԱՐՄԱՆ 1600-ԱՄՅԱԿԻՆ

ԴՐ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊՈ. Գ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

Հայագիտութեան դասախոս Վիկեննայի համալսարանի մէջ

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅՅԱՆ

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԵՆՔ՝

ՀՈԳԵՒՈՐ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ

### Ներածական

Մաշփոց -կամ Մաշթոց- իրաշալի երեւոյթ մըն է հայ ժողովրդի պարմութեան մէջ, որով գրական-մշակութային գործը կամ առաքելութիւնը ամբողջապէս փոխեց և առ յակը ապահովեց հայութեան ինքնուրոյն զոյութիւնը և քաղաքակրթութեան ճակարտագիրը: Եթէ մէկի ծանօթ չիմի պարմութեան, կրնայ խորիի՝ թէ նա ի սկզբանէ կամ երիտասարդական լրարիխն ընդգրկած էր հոգեւոր ասպարեզը և իբր կրօնական մրածեց նոր քրիստոնէական այբուբենը մը սփեղծել Աւելարանի քարոզութեան համար: Ցիրակի, սակայն, նա, որպէս մանկութենէ հելլենական դպրութեամբ կրթեալ ամենաուրութիւն, զնաց, Արշակունի թագաւորներու Դիւանին մէջ «արքայապուր իրամանաց սպասարուր» դարձաւ և միաժամանակ զինուրական ծառայութիւն կը մաքրուածներ: Իր աշակերդն ու կենսագիրը՝ Կորին, կը վկայէ, թէ Մաշփոց «Տեղեկացնալ և հմուտ եղեալ աշխարհական կարգաց, ցանկալի եղեալ զինուրական արուեստին իրոց զօրականացն»<sup>1</sup>:

Օրոշ ժամանակ անց՝ Արշակունեաց Դիւանապետը հոգեւիխութիւն ունեցաւ. հմուտ լեզուագելքը, յաջողակ և սիրուած զինուրականը թողուց բարձր պաշփօնը և աշխարհի փառքն ու բարքերը և մեկուսացաւ Գողթան զաւարի վանքերէն միոյն ճգնարանին մէջ: Վստահօրէն շրջապարի մարդիկ զարմացան և մրածեցին, թէ ինչ է պարահած Մաշփոցին և թերեւս ի ծանուկ կասկածներ ունեցան նրա մրածական առողջութեան մասին: Նման դէաք պարզուած էր Հոգեգալստեան օրը, երբ Առաքեալը «ցան ամեներեան Հոգուվ Սրբով, և սկսան խօսել յայլ լեզուս՝ որպէս և Հոգին լրայր բարբառել նոցա»<sup>2</sup>: Ոմանը կարծեցին, թէ Առաքեալը՝ որ լրաբեր լեզուներ կը խօսէին, քաղուալից էին. սակայն Պեղրոս Առաքեալ հանգստացուց ժողովուրդը՝ բացաբերելով, թէ Աշակերդները հարբած չէին, այլ Սուրբ Հոգին ընդունած, ու կը յիշէր Ցովկէ Մարգարէի խօսքը. «Ասէ Ասպուած, հեղին յունոյ իմմէ: ի վերայ ամենայն մարմնոյ»<sup>3</sup>: Առաքեալը որպէս ընդրեալ Աշակերդը Ցիրուայ, ընդունեցան երկնային հոգին: Բնականօրէն մարդկային իմացականութեան սահմանափակութեան պարագառաւ, անհմանալի կը մնայ այն պարագան, թէ ինչու ասդուածային ողին շնորհուեցան մի զինուրականի, արքունի Դիւանի սպասարութիւն և ոչ մի այլ ձեռնադրեալ հոգեւորականի:

<sup>1</sup> Կորին, Վարք Մաշփոցի, իրաք. Մահմուկ Արեդնան, Երեւան, 1941, լ. 36:

<sup>2</sup> Գործը Առաք., Բ, 4:

<sup>3</sup> Նոյն անդ, Բ, 17:

Սոյն երեսոյը կարելի է բնութագրել որպէս «խորհուրդ խորին», զոր մարդկային միվրա չի կարող լուսաբանել: Յամենայն դեպք Մաշփոց իր ճգնարանեն դուրս զայտ եղք՝ քահանայ (արեղայ) ձեռնադրուեցաւ և ապա անմիջապէս նույիրուեցաւ նոր այրութենքի մը հեկազօ- դութեան:

Մովսէս Խորենացի մի կարճառով նախադասութեան մէջ կը բացաբրէ Մեսրոպ Մաշփոցի հոգեփիխութեան պարմառը: Նա իր Գ. Գրի 47-րդ զիստն սկիզբ կը գրէ: «Տեսեա թէ ի վերջ հասեալ է Թագաւորութիւնն Հայոց, և զիսովութիւնն...»<sup>4</sup>: Ուրեմն Հայաստանի քաղաքական վարժարացումը և ընկերային-համայնքային կեանքի վիտուր վիճակը կամ նախարարաց և իշխանաց անմիաբանութիւնը ծանր մրահոգութիւն կը պարմառէին իրեն: 387 թուին Արշակունիաց Թագաւորութիւնը բաժնուած էր ընդմէջ երկու հզօր պետութիւններու: Իրանի և Բիզանդիոնի: Երկու փարի անց, Արշակ Գ. արքայի (378-389) մահէն եղք. Թէ էղողոսիոս Ա. (379-395) և իրեն յաջորդող կայսրերը թոյլ չփուին հայկական վերութեան շարունակութիւնը իրենց վերին իշխանութեան ներքոյ: 428 թուին Պարսիկը եւս օգպագործելով հայ նախարարաց ներքին զժութիւնը՝ մարզպանութեան վերածեցին Հայաստան աշխարհը: Ներեւարար Մաշփոց մարզպարհական ողիով նախազուշակած էր Հայոց քաղաքական-ընկերային անկայուն ապագան և մրածած՝ մշակութային-հոգեւոր ամրակուոյ խարիսխ մը սպեղծել և այդ ճանապարհով ապահովել ժողովուրդի ինքնուրոյն և յալիրենական գոյութիւնը:

Դանիէլեան կամ արամեական-ասորական գիրերու՝ Հայոց լեզուի բոլոր ձայները արդայայիկելու անբաւարարութիւնը հասպարելէ եղք, Մաշփոց ուսումնասիրեց ժամանակի զիստար այրութենքները, բնականօրէն յարկապէս յունական դասածեները և յեր այնորիկ ապահինեցաւ երկնային օգնութեան՝ խորասուզուելով իր սպեղծագործական մրածումներուն մէջ: Դարձեալ Մովսէս Խորենացին է, որ ամենադամարանական բացաբրութիւնը կու տրայ հայերէն զիրերու հրաշալի սպեղծման: Նա կը գրէ: «Առ սա (Նորփանոս որ ի Սամոս/Սամոսար) երթեալ Մեսրոպայ, և յայսմ եւս անշահ մնացեալ, յաղօթս ապահինի. և դեսանէ: ոչ ի քուն երազ և ոչ յարջնութեան տեսիլ, այլ ի սրբին զործարանի երեւութացեալ հոգոյն աչաց՝ թար ձեռին աջոյ, զրելով ի վերայ վիմի. զի որպէս ի ձեան վերջը զժին կուրեալ ունէր քարն»<sup>5</sup>: Ապա Խորենացի կը պարմէ, թէ «Յարուցեալ յաղօթիցն, եսկենդ զնշանազիրս մնրս, հանդերձ Նորփանոսի կերպածենեալ զգիրն Մեսրոպայ՝ առ ձեռն պարուստ, փոխարելով զիայերէն աթութայն՝ ըստ անսայթաքութեան սիրոբայից Շելլենացոց»<sup>6</sup>: Կորիին՝ Նորփանոսի զործակցութիւնը կամ աշխափանքը Մաշփոցի հետ, կը բացաբրէ այսպէս: «Որով զամենայն ընդուրութիւնս նշանազրացն՝ զնրբազոյնն և զլայնազոյնն, զկարձն և զերկայնն, զառանձինն և զկրկնատրն, միանզամայն յօրինեալ և յանկուցեալ»<sup>7</sup>: Մեսրոպ Մաշփոցի առաջնահերթ առաքելութիւն հանդիսացաւ Ասրուածաշունչ Ս. Գրոց թարգմանութիւնը Հայերէնի՝ նորասպելող այրութենքի օգբազործմամբ: Խորիրդանշական է Առակա Գրոց առաջին նախադասութեան թարգմանութիւնը՝ առաջին առջի: «Ճանա-

<sup>4</sup> Մովսէս Խորենացի, Պարմութիւն Հայոց, իրավ. Մ. Արեգակնար, Ա. Ցամանակակից, 1913, լ. 316:

<sup>5</sup> Նոյն անդ, զիս, ԾԳ, լ. 327:

<sup>6</sup> Նոյն անդ:

<sup>7</sup> Կորին, Վարք Մաշփոցի, Առյուն աւել, լ. 48 և 50:

չել զիմաստութիւն և զխրափ, իմանալ զրանս հանճարոյ»: Մեծ Վարդապետին հանճարեղ դեսիլին էր և նպատակը՝ բարձրացնել հայ ժողովրդի մրատրական և հոգեւոր կրթութիւնը, քրիստոնեական սկզբունքներն ու պատրազմները արմադացնել մարդոց առօրեայ կեանքին մէջ և Հայապան աշխարհը կրօնական-մշակութային դեսակելու անջապեկ Սասանեան Պարսկաստանէն և զրադաշտական կրօնի սպատական ազդեցութենէն: Հայոց նոր այրութենքը սփեղծուած էր 405/406 թուին. Սուրբ Գրոց առաջին թարգմանութիւնը կապարուած էր ասորական «Աշխիթա թագորին» մինչեւ 410-15 թուական: Եփեսոսի Տիեզերական ժողովին էր, 431-32 թուին երբ Ձարգմանից Վարդապետները Կոստանդնուպոլիսին վերադարձան, իրենց հետ քերին Աստուածաշունչ Գրոց յունարին ընդիր «հասպարուն» և «Ճշմարիկ»<sup>8</sup> օրինակներ, որոնց հիման վրայ՝ վերադեսութեան ենթակունցաւ առաջին թարգմանութիւնը՝ Ս. Սահակայ և Ս. Մեսրոպայ զիխաւորութեամբ: «Վարահօրին 435 թուին Ս. Գրիգորի թարգմանութիւնը ամբողջապէս աւարտած էր և պատրաստ՝ ուսուցման և այլ նպատակների իրազորդման համար:

Զրադաշտական կրօնի և ատհասարակ իրանական մշակութային ճնշման դէմ պայքարը շարունակունցաւ շուրջ 70 տարի: Եզնիկ Կողրացի իր «Եղծ Աղանդոց» գրքին մէջ հերթեց պարսկական հայապահիքները. Վարդան Մամիկոնեան և ընկերը, ինչպէս և Նետոնեանը գէնքով պայքարեցան պարսկական բռնկալութեան դէմ և Աւարայրի ճակարտարդին (26 Մայիս 451) զոհեցին իրենց կեանքը՝ վասն Ֆիոնի և վասն հայրենեաց: Ենք այնորիկ հայ ժողովուրդը 33 տարի պարտիզանական կրիներ մղեց իրանական յարձակումներու դէմ՝ Մամիկոնեան տոհմի առաջնորդութեամբ և ի վերջոյ 484 թուին սասանեան Պարսկաստան՝ Վաղարշ (կամ Վաղախշ) արքայի օրով և Նուարսակի (Ներ գաւառ) դաշնագրով ճանչցաւ Հայոց խոճի և կրօնի ազապութիւնը:

Քրեսպոնեութեան հայկականացումը կամ հայկական ոճով իրացումը հիմնականօրէն իրազործունցաւ Ե. դարուն՝ շնորհի Մաշփոցեան Այրութենքի և հայ ժողովրդի պայքարին՝ ընդուն դրացի երկիրներու բռնապետութեան և կրօնա-մշակութային ճուման քաղաքականութեան: Քրիստոնեութիւնը հայութեան համար դարձաւ աշխարհահայեացք, քաղաքակրթութիւն և կեանքի կերպարութեան: 553-55 թուին, երբ Դուինի Բ. Ժողովը մերժեց Քաղկեդոնի քրիստոնական բանաձեւը, Հայ Եկեղեցին կարողացաւ թօթափել նաև բիզանդական ճնշողական քաղաքականութիւնը, ազգայնացաւ և հանդիսացաւ հայկական արևսպիներու մայրը, մշակոյթի և ազգային ինքնութեան պահապանը:

## 1. Հայերէն Այրութենի սփեղծումը

Հայոց նախահայրեն Ուրարտացիք (շ. 860-շ.585 Ք.ա.) գործածած են սեպագրեր, քայլ յօրինած էին նաև իրենց յարուկ պատկերազրութիւնը (Hieroglyph)<sup>9</sup>: Ուրարտական թագաւորութեան կործանումն և հայ ժողովրդի վերջնական կազմութենէն եւքը, Զ-Ե. (Ք.ա.) դարին սկսեալ, հայեր մեծագոյն հաւանականութեամբ պարսկական գրութիւնը օգ-

<sup>8</sup> Նոյն անդ, լ. 76:

<sup>9</sup> Mirjo Salvini, Geschichte und Kultur der Urartäer, Darmstadt 1995, 193-206; Albrecht Goetze, Kulturgeschichte des Alten Orients-Kleinasien, München, 1971, 193-94.

դրագործած էին, քանի Երուանդունեան (401-331, 331-201 Ք.ա.) և Արքաշեսեան իշխանութիւնը (190 Ք.ա. - 52 Ք.ե.) աքեմենեան-իրանական և Արշակունի թագաւորներ (52-428 Ք.ե.) պարտեական ծազու ունեին: Արքաշեսեան հարսկութեան մնացոյն դմքը՝ Տիգրան Բ. (95-55 Ք.ա.), յունական ծակույթը և իրացու հելլենական մշակոյթը, այսինքն յունական զիրու ու դարրութիւնը: Տիգրան և իր տիկինը՝ Կողոպափրա, Հայաստան երախիքին յոյն արուխպագելրուներ, մատենազրեր և պարմարաններ, ինչպէս հոեսքորն Ամփիքրաէս Վրեսից և պարմազիրն Մեփրողորոս Ալեպսիսէն, որպէսզի հելլենական մշակոյթը երկրին մէջ դրածուի և արժարանայ<sup>10</sup>: Պուրաբռոսի վկայութեան համաձայն՝ երբ հոռվմէական գօրաւար Լուկուլլոս Տիգրանակերդ մայրաքաղաքը մուփը գործեց, այնպես հանդիպեցաւ մի խումբ դերասաններու, որոնք եկած էին յունական ողբերգութիւններ թարերախարալալու<sup>11</sup>: Ուստի կարելի է հետեւենել, թէ Մեծն Տիգրան հանդիսացաւ այն արքայն և անձնաւրութիւնը, որ Հայաստանի մշակոյթը ուղղեց դէպի Երուպա կամ Արեւութը և հետքայ դարերուն այդ ուղղութիւնը առաւել զարգացաւ և ամրացաւ, մասնաւրաբար հայ ժողովրդի քրիստոնէութեան դարձեն եղք: Միեւնոյն հելլինակը՝ Պուրաբռոս, կը պարմէ, թէ Տիգրան թագաւորի որդին և յաշորդը՝ Վրափազդ (54-34 Ք.ա.), նոյն ինքն զրած է ողբերգութիւններ, ճառեր և պարմական գործեր, որոնցմէ ոմանք պահպանուած են<sup>12</sup>: 79-60 (Ք.ա.) թուականէն սկսեալ, երբ հոռվմէացիք և հայեր մերձաւոր յարաբերութեանց մէջ մրան, մերք թշնամական և մերք բարեկամական, ըստ երեսոյթին Հայաստանի մէջ զոնէ երթևոն լավիններէն գրութիւնը եւս գործածուեցաւ: Օրինակի աղազաւ Վահարշապար (Էջմիածին) քաղաքի մէջ գիրնուած են երկու արձանագրութիւններ 176 և 185 թուականներից, որոնք կը պարմնն Ժ. և Ժ. հոռվմէական լեզուններու մասին ի Հայաստան աշխարհ<sup>13</sup>: Գառնիի արձանագրութիւնը, որ վսպահօրէն կը պարկանի Տրդար Ա. (52/66-75 Ք.ե.) Արշակունի թագաւորին, գրեալ է յունարէն լեզուով և գրով: Նաև Գառնիի բաղնիքի մոզայիկ յարակի գրութիւնը, մեծ հաւանականութեամբ Գ. դարս գործ, Յունարէն է: "ΜΗΔΕΝ ΛΑΒΟΝΤΕC ΗΡΓΑΣΑΜΕΘΑ" (Աշխարհեցանը [τι] ոչինչ սրացանք): Սոյն նախադասութիւնը մեզ կը յիշեն: Նուկասու Անեփարանի<sup>14</sup> խօսքն ու պարմութիւնը, ըստ որում Ցիոնուի աշակերտները ամբողջ զիշերը ձկնորսութեամբ աշխարեցան և ոչինչ կրցան սրանալ:

Եթէ մեր ենթադրութիւնը ճիշդ է, այդ պարագային յիշեալ նախադասութիւնը հնագոյն քրիստոնէական գրութիւնն է Հայաստանի մէջ՝ յունարէն լեզուաւ<sup>15</sup>:

<sup>10</sup> Plutarch (ca. 46-120 A.D.), Lucullus 22; Strabo XIII, 1, 5; Rene Grousset, Histoire de l'Arménie, Paris, 1947, 90; Hakob Manandian, Tigran II et Rome, Lisbon, 1963, 58-59.

<sup>11</sup> Plutarch, Lucullus 29; R. Grousset, ibid. 90.

<sup>12</sup> Plutarch, Crassus 33; R. Grousset, ibid. 91.

<sup>13</sup> H. Dessau, Inscriptiones latinae selectae (Bd. I-III, Berlin 1892-1916), 9117; idem. Corpus inscriptionum latinorum, III, 6052; 11 Rostowtsew, Izwestiya archeologitscheskoi Komisii, wip. 33, 1909; Յակով Մանանեան, Քննական վեստութիւն հայ ժողովրդի պարմութեան, Երևան, հրթ. Բ/Ա, 1957, լշ. 49. Պարմութիւն հայ ժողովրդի. իրադ. Հայկ. Գիտութիւնների Ակադեմիա, հրթ. Ա., Երևան, 1971, լշ. 788:

<sup>14</sup> Օուլ. 5.5:

<sup>15</sup> M. K. Krikorian, Kirchengeschichte als Glaubenserfahrung-Identität und Schicksal des armenischen Volkes, in: Kanon XV, Kirchenrecht und Ökumene, Eichenau 1999, 133; idem, Die Armenische Kirche, Frankfurt am Main, 2002, 24.

301/314 թուականներին, երբ Ս. Գրիգոր Լուսաւորչի (հայրապէտ 314-325) և Արշակունի Տրդափ Մեծ արքայի (298-ը, 330) ջամբերով Քրիստոնեութիւնը Հայաստանի մէջ պետքական կրօնը հոչակուեցաւ, հայր չունեին իրենց յափուկ այրութենք: Ազգային գիրը կարեւոր էր ոչ միայն նորակազմ Հայաստանայց Առաքելական Եկեղեցւոյ առաքելութեան, այլև պետքական կառույցի ինքնուրոյնութեան և գօրաւոր պահպանման համար: Այդ իսկ պարագանական գարմանայի չէ, որ հայ զրի սպեղծման շարժումը ծագում առաւ պետքական շրջանակի մէջ և քաջալերուեցաւ Վրշակունեաց արքունիքի կողմանէ: Նախախնամութեան ներշնչումով՝ հայկական այրութենին սպեղծման անհրաժեշտութիւնը զգաց և այդ պարագականութիւնը անձնական նախաձեռնութեամբ սրբանենց արքունի դիվանապետ և սիրուած բարձրասդիման գինուորական Մաշփոց (Կորիինի մօց), որ Մովսէս Խորենացիի և այլոց մօտ կը կոչուի Մեսրոպ, Տարօն զատարի Հացեկաց գիւղէն, որդի Վարդանի: Զգալով Արշակունեաց թագաւորութեան մօքալուով փլուզումը, 392-393 թուին նա թռղուց Արքունիքը, զնաց-առանձնաց ճգնարանի մը մէջ և աղօթիք և խոսքովանութեամբ ոյժ և կորով ամբարեց հոգւոյն մէջ և ապա նուիրուեցաւ Հայոց գրերի գիւղին: Այս մեծ առաքելութեան յաջողնութեան համար իրեն հենք գործակցեցան մի շարք անձինք, զորս կը նկարագրենք համաօդարար:

### 1. Սահակ Պարթեւ Հայրապետ (387-439)

Աերջին շառախիղը Ս. Գրիգոր Լուսաւորչի գերդաստանի. բարոյապէս և մտաւորական աշխափակցութեամբ քաջալերեց Մաշփոց Վարդապետը, լայն մասնակցութիւն բերելով Ասքուածածունչ Ս. Գրոց թարգմանութեան հսկայական գործին, և արժանացաւ «համահաւասար» կամ «զուգակշիռ» դիմուսին և պարուին: Սիամանթօ (Արտուր Եարճանեան) իր բանասդեղութեան մէջ կը զրէ.

Ով Մենակեաց, ով Մագիստրոս, ահաւասիկ  
Երկու Հայքերն «Ովսաննայ» քեզ կը զռուան...  
Եւ ովսաննայ Վաղարշապարի Հայրապետին,  
Սահակ Պարթեւ զուգակշիռ արքանեակիդ:

### 2. Կումշապուհ արքայ Հայոց (400/401-413/414)

Մեսրոպ<sup>16</sup> Մաշփոց<sup>17</sup> հայկական այրութենի մը սպեղծման համար՝ Սահակ Կաթողիկոսի հեթ դիմեց օրուան Վառամշապուհ թագաւորին և արժանացաւ նրա անմիջական և անվերապահ թարյական և նիւթական օժանդակութեան: Առ այս կը վկայէ Կորիին վարդապետ. «Բազում հարցափորձի և քննութեան զանձինս պարապեցուցեալ և քազում աշխափութեանց համբերեալ, արդ առնեին ապա և զկանխագոյն խնդրելին իրեանց՝ թագաւորին Հայոց, որոյ անուն կոչէր Վոամշա-

<sup>16</sup> Մ. Խորենացի միշտ կը գործած. Մեսրոպ անունը. միայն մէկ անգամ կը յիշէ: «Երանելի վարդապետն մեր Մաշփոց» (Գիրը Բ., զիս. Ժ., Խոյն անդ, լ. 120), որ կրնայ Խան հետապայ զրչի մը միջամբութեան արդիինք իրենք:

<sup>17</sup> Կորիին միշտ կը գործած. Մաշփոց/Մաշփոց անունը. միայն վերնագրի մէջ կը զբնենք «Մեսրոպ/«Մեսրոպ» փարբերակը, որ կարող է հետապային գրիչներու կողմէ. անելացուած լինել: Ղազար Փարավեցի կը գործած. նրկու ձեւերը նեւ:

պոկ: Յայնամ պատմեր նոցա արքայն վասն առն ուրումն ասորոյ եպիսկոպոսի ազնուականի՝ Դանիկ անոն կոչեցելոյ, որոյ յանկարծ ուրեմն զբեալ նշանագիրս աղփաքերաց հայերէն լեզուի»<sup>18</sup>:

### 3. Դանիկ եպիսկոպոս Ասորի

Ազնուական ծագմամբ Դանիկ եպս. Ասորի կ'ապրէր ի Միջազգեստ, որ ունէր հայերէն լեզուին յարմարեալ<sup>19</sup> և «կարգեալ ըստ ձեսոյ օրինակի յունականին զվադմանց գրեալ շարագիր բատից»<sup>20</sup>. Սահակ և Մեսրոպ «զամս սակաս» փորձեցին Դանիկեան այրութեանը և սակայն «գեղենկացեալ զիրացին». ոչ լինել բաւական այնու նշանագործ սրոյց հորովել զեղգենայ բատից հայկականաց հազներգարար, մորացածոյին այնուիկ գծագրութեամբ»<sup>21</sup>:

### 4. Տարէլ Երէց

Հարէլ Երէց ասորի ազգականն էր Դանիկ եպիսկոպոսի: Արքունի նամակաբեր Վահրիճի միջնորդութեամբ նա զնաց Միջազգեստը և «ղանիկեան զիրերը» ուղարկեց Վոամշապուհ թագաւորին<sup>22</sup>: Խորենացի կը նշէ. թէ: Տարէլ և Վահրիճ Խաղունի «եկեալ եպուն ցմեծն Սահակ և Մեսրոպ»<sup>23</sup> նորազիւր զիրերը:

### 5. Վահրիճ Խաղունի

Կորին պարզօրէն կը գրէ, թէ Վոամշապուհ արքայն Հայոց «առաքէր զոմն Վահրիճ անուն հրովարդակօք առ այր մի երէց, որոյ անոն Տարէլ կոչէին»<sup>24</sup>: Վահրիճը անուն հրեշդրականորէն Խորենացի աւելի ճոխ վեղեկութիւններ կը հաղորդէ. «Լասն որոյ առաքեաց հրեշդրակութեամբ զայր մի պարուական աշխարհիս և հատարիմ իր, Խաղունի ազգա, Վահրիճ անուն, յոյժ փափաքող նորին զործոյ, առ Տարէլն այն»<sup>25</sup>:

### 6. Շոտիանոս Գեղագորիչ

Շոտիանոս Սամսապի<sup>26</sup> քաղաքում ապրող «զրիչ ոմն հելլենական դպրութեան» ըստ Կորինի<sup>27</sup>: Խորենացի առաւել յսդակութեամբ կը հասկարէ «հրաշալի արուեստի հելլէն գրչութեան, որ ի Սամսո էր միայնացեալ»<sup>28</sup> Շոտիանոս յայտ-

<sup>18</sup> Կորին, Խոյն ան, լ. 42. Խորենացի, Խոյն ան, լ. 325-26:

<sup>19</sup> Խորենացի, Խոյն ան, լ. 325:

<sup>20</sup> Խոյն ան, լ. 326:

<sup>21</sup> Խոյն ան:

<sup>22</sup> Կորին, Խոյն ան, լ. 44:

<sup>23</sup> Խորենացի, Խոյն ան, լ. 326:

<sup>24</sup> Կորին, Խոյն ան, լ. 44:

<sup>25</sup> Խորենացի, Խոյն ան, լ. 326:

<sup>26</sup> Խորենացի մօդ: «Սամսո» (!), Խոյն ան, լ. 327:

<sup>27</sup> Կորին, Խոյն ան, լ. 48:

<sup>28</sup> Խորենացի, Խոյն ան, լ. 327:

նապէս զեղագրած եւ չափագրած է. Ս. Մեսրոպի յօրինած զիրերը, որպէս նուրբ կամ լայն, կարճ կամ երկայն, առանձին կամ կրկնաւոր՝ որպէսզի յսդակօրէն իրարմէ զանազանութիւն։ Կորին այս աշխատանքը կը բնորոշէ որպէս «զամնեայն ընդուրութիւնս նշանագրացն», իսկ Խորենացի կը բացագրի, թէ Ս. Մեսրոպ և Հոռիանոս միասնարար «կերպածնեալ զգիրն առ ծեսն պարբասար Մեսրոպայ, փոխափրելով զիայերէն արութայսն ըստ անսայթաքութեան սիդարայից Շնկենացոց»<sup>29</sup>:

«Ասդակօրէն Մեսրոպ Մաշփոց հայերէն այրութենի սրենդման ժամանակ՝ աչքի առաջ ունեցած է յունական աղփարենքը, բայց անհմասպ է պնդելն»<sup>30</sup>, թէ նա ամբողջապէս հետեւած է յունականին, քանի յունարէն լեզուն ի վիճակի չէ արդայայդելու հայերէնի եռասդիճան կամ եռափեսակ բաղաձայնները, -բ-պ-փ, գ-կ-ք, դ-դ-ց, ճ-ջ-չ, - կամ «լ-դ-խ» եռեակը, ինչպէս և «ժ-զ» և «ր-ռ» զուգակշիռները և կամ ձայնաւորներու «ը-ե-է» եռեակը:

## 2. Այրութենի սրենդման դարեթիւր

Հայերէն այրութենի սրենդման թուականի սրուզման զիխաւոր աղբիւրը բնականօրէն Մաշփոցի կենսազիր Կորինի զիրըն է։ Դիմնական գրուաները երկուր են. առաջինը «Ասրուց» բնագրին մեջ և երկրորդը՝ կենսագրութեան աւարդին։

Առաջին փաստը կը վերաբերի դանիկեան զիրերու Հայասդան՝ Վոամշապուհ արքայի ձեռքը հասնելուն. «ի հինգերորդ ամի թագաւորութեան նորա ի նա հասուցանելք»<sup>31</sup>: Ս. Մահակ և Ս. Մաշփոց նորազիւր այրութենն սրանալով՝ «իբրև ամս երկու» ընդ «մարդադ մանկանց» կը փորձեն և յերդյ կ'անդրադառնան, թէ այդ զիրերը «բաւական» կամ կարող չեն արդայայդելու հայերէն լեզուի բոլոր ձայնները<sup>32</sup>: Ազա դարձեալ կամ դրականին «ի հինգերորդ ամի Վոամշապուհ արքային Հայոց»<sup>33</sup> Ս. Մեսրոպ կը ճանապարհորդէ. Միջազգեկորդ իրազործելու իր առաքելութիւնը և ի վերջոյ Եղեահա բաղաքի մեջ «պարզեւէր իսկ վիճակ յամնեաշխնդիրողէն Ասդուծոյ, հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոց և սրանչելի՝ սուրբ աջովն իրով, նշանագիրս հայերէն լեզուին»<sup>34</sup>: Հոռիանոս զեղագրի աշակեցութեամբ նորասեղծ հայկական զիրերը ըստ չափու և հասակի ճշգրտորէն ծեսակերպել։ Կարք, Մաշփոց կը վերադառնայ Հայասդան «ի կողմանս Այրարարեան զաւառին, առ սահմանը

<sup>29</sup> Նոյն անդ:

<sup>30</sup> Frederic Leydig, Considerations sur l'Alphabet de Saint Mesrop et Recherches sur la Phonétique de l'Arménien, Wien 1982, 33-47ff. ըստ պրոֆ. Ֆեյդիի, 23 զիրեր հայկական այրութենի՝ առևտած ևն Յունարէն։ հմնք. Տրաւեայ Ամառեան, Հայոց Գիրերը, Վիեննա, 1928 (Ազգ. Մատ. Կմթ.), լ. 177-203 և շրեկթ. և Ռ. Մելիքիշեան, «Հաւոյս Ամսօրնաց», 1896, լ. 215: Ֆեյդի նոյնութեամբ բաղադա և. Մելիքիշեանի ցուցակը կամ ցանկը՝ դրա թողուու Զ և Վ զիրերը։

<sup>31</sup> Կորին, Խոյն անդ, լ. 44:

<sup>32</sup> Նոյն անդ, լ. 44, 46:

<sup>33</sup> Նոյն անդ, լ. 46:

<sup>34</sup> Նոյն անդ, լ. 48:

Նոր Քաղաքին<sup>35</sup>, ի վեցնրդոյ ամի Վոամշապոհ արքային «այց մեծաց»<sup>36</sup>: Արդ, ամփոփելով Կորինի հաղորդումները՝ կը սկսեանք հետեւեալ պատկերը:

- Վոամշապոհ արքայի 5-րդ տարին՝ Հայաստան կը թերուին Դանիկեան նշանազրերը:
- «Երբեւ ամս երկու» այդ գիրերը կը փորձարկուին և իբր անբաարար կը յայլնուին:
- Դարձեալ Վոամշապոհի 5-րդ տարին՝ Մաշտոց Միջազեւրը կը ճանապարհորդէ՝ Հայց լեզուին յարմար այրութեան մը զբնելու:

- Ի վերջոյ Եղեսչոյ մէջ նա ասպուածային օգնութեամբ կը հնարէ հայկական Այրութեան և Սամոսապ քաղաքում Հռովհանոս Գեղագրիցի հետք ճշգրտութեամբ կը ճեւակերպէ նորասպեղ գիրերը:

- Վոամշապոհ արքայի 6-րդ տարին Ս. Մեսրոպ հայկական նոր Այրութեանով կը վերադառնայ Հայաստան:

5-6 ժամանակագրական անհամաձայնութիւնը հարթելու մբաղրութեամբ Ռ. Աճառեան, Ս. Աքելեան և այլք առաջարկած են առաջին 5-ը սրբազնել<sup>37</sup> որպէս 3, սակայն Ղազար Փարավեցի, որ Կորինին կարծ ժամանակ անց զրած է իր Պարմութիւնը, օգբագործելով Կորինի «Ղարք»ը, Ս. Մեսրոպի հայերեւ զիրեր սրեղծելու առաքելութեան սկիզբը կը նշանակէ «յամս հինգերորդ արքային Հայց Վոամշապիոյ՝ եղբօր Խոսրովոյ»<sup>38</sup>. Նմանապէս Սրբավանոս Աստղիկ (Ժ.-ԺԱ. դ.)<sup>39</sup> և Վարդան Արեւելցի (ԺԳ. դ.)<sup>40</sup> Դանիկեան գիրերու ժամանակը կ'առնչեն Վոամշապոհ թագաւորի իշխանութեան 5-րդ տարուան հետք: Ներեւարար լաւագոյն լուծումը պիտի լինի՝ Դանիկեան գիրերու փորձարկութեան շրջանը փոխանակ «իբրեւ ամս երկու» սրբազնել որպէս «ամիս երկու»: Թեպէս Խորենացի ես «զամս սակաւ» կը զրէ, բայց կը խորիիմ, թէ երկու ամիսներ բաւական պիտի լինէին Մաշտոցի և իր աշակերպներուն համար՝ իմանալու Դանիկեան գիրերու պակասութիւնները: Անիրամթշը է նաև նշել, որ «Ազա առեալ» սկսուածքով այն յարուածը, ուր ասում է, թէ նա սովորեցրեց Դանիկեան նշանագրերով, ըստ Ներսէս Ակինեանի, ապա և Արդաշէս Մաթեսուսեանի, իր գեղում չէ: «Ղարք Մաշտոցի» քննութեամբ անոնք այն լինսակէքը կը յայլնուն, որ այս յարուածը պիտք է անմիջապէս յաջորդէ: Ուսի զերի մօդ Մաշտոցին ընդունելու և քաղաք առաջնորդելու յարուածին, որով արդէն իմաստային համապարասիանութիւն կը սրենդուի և բնական կը հնէ: Կորինի ըսածը, թէ Մաշտոցը երկու տարի աշակերպներուն սովորեցուց Դանիկեան նշանագրերով և այդ պաշճառա վարդապետական ասդիման սրացաւ: Այս լինսակէքը կը պաշտպանէ նաև Պօղոս Անանեան «Ղարք Մաշտոցի» գործի իշխանութեան մէջ:

Իբր եզրակացութիւն կարելի է հետեւեալ պատկերը նկարագրել:

<sup>35</sup> Նոր բաղաք=Վաղարշապատ:

<sup>36</sup> Կորին, նոյն անո, լք 50:

<sup>37</sup> Կորին, նոյն անո, լք 108-109, ծանօթագրութիւն թի 59:

<sup>38</sup> Ղազար Փարավեցի, Պարմութիւն Հայց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, իրաբ. Գ. Տիր-Մկրտչեան և Սիր. Միսանեան, Տիգոս, 1904, լք 13:

<sup>39</sup> Սրբավանոս Տարօնեցի Աստղիկ, Պարմութիւն Տիեզերական, Ս. Պևկուսրուր, 1885, լք 74 (Գիրը Բ.) զիս. Ա.:

<sup>40</sup> Վարդան Վարդապէս Արեւելցի, Հաարումն Պարմութեան, Վանսկիկ, 1862, լք 49:

- Վոամշապուիի թագաւորութեան 5-րդ փարին՝ 400/401-405 Հայաստան կը բերուին Դանիէլեան նշանագրերը: Երկու ամսուան փորձարկութենէ եթք՝ Մաշփոց միևնոյն փարին կը մեկնի Միջազգեարք և անդ՝ Եղեահոյ<sup>41</sup> մէջ կը սրեղծէ հայկական նոր Այրութեանը, զոր Սամոսափի մէջ վերջնական կը ձեւակերպէ Հռովհանոս Գեղագրի օժանդակութեամբ և հայրենիք կը վերադառնայ Վոամշայուիի 6-րդ փարին, այսպէս.

Սկիզբ Վոամշապուիի իշխանութեան 400/401

402

403

404

Փորձարկութիւն Դանիէլեան նշանագրերու և ուղենորութիւն Ս. Մեսրոպի ի Միջազգեարք

Հայերէն Այրութեանի սպեղծագործութիւնը և վերադարձ Մաշփոցի ի Հայաստան աշխարհ

405

Հայկական Այրութեանի սպեղծագործման ժամանակի մասին երկու կարեւոր փուեալներ եւս կան Կորիիմի զորի աւարդին:

1. «Ի դպրութենէ Հայոց մինչեւ ցվախճան սրբոյն՝ ամք երեսուն և հինգ»<sup>42</sup>:

2. «Եւ դպրութիւնն Հայոց յոթերորդ ամ։ Յազկերպի առեալ սկիզբն»<sup>43</sup>:

U. Մեսրոպի վախճանման սպոյզ թուականն է 440. 35 թիւլ արդահանելով՝ կ'ունենանք 405 որպէս սկիզբ Դպրութեան Հայոց: Նմանապէս սպուզութեամբ զիւկենք Պարսից Յազկերը Ա. արքայի իշխանութեան թուականը 399/400-420/421. ութերորդ փարին կը լինի 405/406

399/400 Սկիզբ իշխանութեան Յազկերպի

400

401

402

403

404

405

405/406 Հայոց զրերի սպեղծման թուականը:

Վերջին կէպը՝ Յակոր Մանանդեանի<sup>44</sup> փեսակէփն է, ըստ որում հայկական Այրութեանը սպեղծուած է: Դ. դարու վերջը՝ Վոամ Դ. Կրմանի (388/89-399/400) և ոչ Յազկերը Ա. արքայի ժամանակ: Մանանդեանի կարծիքը հիմնուած է Յովհաննէս Դրասիսանակերպից<sup>45</sup> պարմազրի ալսկասաւոր հաղորդման վրայ, որ քաղուած է Մովսէս Խորենացու<sup>46</sup> Պարմութենէն և հետքնարար արդիւնք է թիւրիմացութեան<sup>47</sup>:

<sup>41</sup> Ըստ Կորիւնի «Վարք»ին՝ Մաշփոց հայերէն Այրութեանը սպեղծեց յԵղիսիա. գլուխ նոյն անդ, 46, 48 և ծանօթագրութիւնը, լ.թ 109. սակայն Խորենացոյ Պատմութեան համաձայն՝ այդ հրաշալի դԼաքը գլուղի ունեցած է. ի Սամոսապի. նոյն անդ, լ.թ 327:

<sup>42</sup> Կորիւն, նոյն անդ, լ.թ 98:

<sup>43</sup> Նոյն անդ, լ.թ 100:

<sup>44</sup> Յակոր Մանանդեան, «Տեղակապիր» Հայկ. Գիրութիւնների Ակադեմիայի, Երևան, 1952, թ. 7, լ.թ 50:

<sup>45</sup> Յովհաննէս Դրասիսանակերպի, Պատմութիւն Հայոց, Տիգիս, 1912, լ.թ 54:

<sup>46</sup> Մ. Խորենացի, նոյն անդ, լ.թ 324, 328 (Գիրը Երրորդ, զիս. ԾԱ. և ԾԴ.):

<sup>47</sup> Մեսրոպ արքայ (արքանս) Գրիգորիան, լ.թ 324, 328 (Գիրը Երրորդ, զիս. ԾԱ. և ԾԴ.):

### 3. Գիր-Գիրը-Ա. Գիրը

Հայերէն Վյրուբնի սրեղծմամբ՝ հիմքը դրուեցաւ հայ գրականութեան և զիրը յօրինելու արլուստին: Առաջին մատեանը, որ հայերէն նոր փառերով գրուեցաւ՝ Սուրբ Գրոց թարգմանութիւնն էր, նախ ասորական «Պեղջթա» կաղապարէն և ապա յունական Եօթանասնից ընդիր օրինակէ: 431-432 թուին, Եփեսոսի Տիեզերական Ժողովէն (431) եպք, երբ Թարգմանիչ Վարդապետներ Կ. Պոլսէն Հայագան վերադարձան, իրենց հետ ընդին Ս. Գրոց յունական անթէրի օրինակներ, որոնց հիման վրա առաջին թարգմանութիւնը ամրողապէս վերափեսութեան ենթարկուեցաւ՝ Ս. Սահակայ և Ս. Մեսրոպի հովանատորութեան և դեկապարութեան ներքոյ: 435 թուին Վարսահօրէն հայերէն Աստուածունչ Ս. Գիրը պատրաստ էր աւելարանչութեան և Եկեղեցական պաշտամունքի գործածութեան համար: Այս առնչութեամբ Կորին կը նկարագրէ: «Արդարի ուրախութիւն»ն ու «ակնավայել գիշխիլ»ը ի Հայագան աշխարհ, ուր Ս. Գրոց թարգմանութեան շնորհիկ՝ սրանչելի վիճակ սրեղծուեցաւ, և երբ օրէնսուսոյց Մովսէս միւս մարզարէներու հետի, յառաջադիմն Պողոս միւս առաքեալներու խումբը և աշխարհակրկիչ Աւելպարանը «հայաբարբար և հայերէնախօսը գիտան»<sup>48</sup>:

Ս. Գիրը հայոց մօր ամենէ՛ շաբ գրուած կամ ընդօրինակեալ մապեանն է, որ իյթան և աղրիլ հանդիսացաւ հայ գրականութեան և մանրանկարչութեան յառաջացման և զարգացման: Շուրջ 30.000 վերապրած ձեռագրերու մի կարեւոր մասը Աստուածաշունչի ամրողական կամ մասնակի գիրքեր են: Ե. դարուն արդէն Ս. Գրոց 6 տիեսակներ (type) կազմադրուեցան:

Առաջին տիեսակը Ս. Գիրը էր՝ ամրողական կամ երկմասնեայ - Դին և Նոր Կրտակարեր, կամ առանձին գիրքեր՝ քարոզչութեան, ընթերցանութեան, ուսուցման կամ ուսումնասիրութեան համար: Միւս հինգ տիեսակները Եկեղեցական ծէսի և պաշտամունքի նպագակին կը ծառայէն, այսպէս:

Ա. Առաջին տիպարը Աւելպարանն է (կամ Չորս Աւելպարանք), աստուածաշնչական ամենէ՛ շաբ ընդօրինակուած և դպրածուած գիրքը, յաճախ զարդարեալ սրանչելի մանրանկարներով և զարդագրերով: Նշանաւոր են երկու մազաղաթեայ ձեռագրեր Ձ. դարից:

ա. Մլքէ թագուհիոյ Աւելպարանը 862 թուականէն - Զեռագիր Ձ. 1144/86 Վենետիկի Միհիթարեան Մագիստրադարանի:

բ. Լազարեան Աւելպարանը 887 թուականէն - Զեռագիր Ձ. 6200 Երեւանի Մաշտոցի անուան Մագիստրադարանի:

ժ. դարից մեզ հասած են հենքենեալ 8-10 Աւելպարանները.

1. Կարմիր Աւելպարանը 909 թուականէն - Զեռագիր Ձ. 6202 Երեւանի Մագիստրադարանի:

<sup>48</sup> Կորին, Խոյն անո, լ. 56:

2. Խարզմանչաց Աւելքարանը 966 թուականից - Ձևոազիր Թ. 537 ի Baltimore, Walters Art Gallery:

3. Ծղրութի Աւելքարանը 974 թուականին - Վրաստանի Զաւախիք գաւառից:

4. Սանասարեան Աւելքարանը 986 թուականին - Ձևոազիր Թ. 7735 Երեւանի Մագրենադարանի:

5. Էջմիածնի Աւելքարանը 989 թուականին - Ձևոազիր Թ. 2374 Երեւանի Մագրենադարանի

6. Երուսաղեմի Աւելքարանը 10-րդ դարից - Ձևոազիր Թ. 2555 Երուսաղեմի հայոց Պապրիաբարանի:

7. Վիեննայի Մխիթարեան Հարց Մագրենադարանի Աւելքարանի հարակուդորը 10-րդ դարից - Ձևոազիր Թ. 697:

8. Ժ. դարու Աւելքարան - Թ. 789 Ձևոազիր Նիւ Եորքի Pierpont Morgan Գրադարանի:

9. Վեհափառի Աւելքարանը 10-րդ դարից - Ձևոազիր Թ. 10780 Երեւանի Մագրենադարանի:

10. Ժ. դարու Աւելքարան - Ձևոազիր Թ. 5547 Երեւանի Մագրենադարանի:

11. Ժ. դարու Աւելքարանի երկու թերթը - Էջմիածնի Աւելքարանի կրկնազիր կամ նմանազիր - Ձևոազիր Թ. 9430 Երեւանի Մագրենադարանի:

Բ. Ա. Գրոց երկորդ տիպարը ճաշոց Գիրքն է, որ եկեղեցական պաշտամունքի ամբողջ դարուան ամենօրեայ ընթերցուածքները կը բովանդակի: Վարահօրէն առաջին համառօք ճաշոց Գիրքը յունարէն լսուա կազմած էք Ա. Գրիգոր Լուսաւորիչ, որ Ե. դարուն հայերէն Այրութենի սփեղծումէն եփք՝ հայերէնի թարզմանուեցա Մաշփոց Վարդապետի, Սահակ Կարողիկոսի և իրենց աշակերտներու կողմանը: Միաժամանակ շուրջ 417-419 թուականին հայ հոգեւորականներ Երուսաղեմի մէջ յունական ճաշոց Գիրքը թարզմանած են հայերէնի, յարմարեցնելով Հայ Եկեղեցւոյ աւանդութեան:

Բնականօրէն ճաշոց Գիրքը յընթացս ժամանակի գարզացաւ և ճոխացաւ և ԺԱ/ԺԲ. դարուն սրացաւ իր վերջնական կերպարանը: Շնորհի հայ մրաւորականներու լայն հետաքրքրութեան և արթևամքութեան՝ պաշտօնական ճաշոց Գրքի կողքին սփեղծուած են այլ տիպարներ, որոնք, սակայն, պահպանած են Գրքի հիմնական կառոյցը: Օրինակի աղացաւ Ա. Շննդեան քօնի առաջին ուր օրերու զիսաւոր ընթերցուածները կը համապատասխանեն Երուսաղեմի հին ճաշոց Գրքի կանոնին: Երուսաղեմական ճաշոց Գրոց թանկազին մի ձևազիր կը պահուի Երուսաղեմի հայոց Պապրիաբարանի մէջ - Ձևոազիր թ. 121<sup>49</sup>:

Գ. Երրորդ տեսակը ճաշոց Գրքի կը պարունակէ միայն Աւելքարանի ընթերցուածները, զորս Պապրազի սկիզբը եղանակաւոր կը կարդայ սարկաւազը (և յաւարք Պապրազի ծիսակարար հոգեւորականը վարը՝ արեանի մէջ կ'ընթեռնու մի յափուած Յովհաննու Աւելքարանին): Այսպիսի Աւելքարաններ միջին դարերուն յաճախ շըն մանրանկարներով

<sup>49</sup> Le Codex arménien de Jérusalem 121, par Athanase Renoux, PO 35/I/No 163, Turnhout 1969; Le Lectionnaire de Jérusalem en Arménie: Le Čašoč, Introduction et Liste des Manuscrits, par Charles (Athanase) Renoux, PO 44/4/No 200, Turnhout 1969.

զարդարուած կը լինէին, վասնզի պարկերները հաւաքացելոց համար սրբապարկերի (իկոն) դեր կը կարարէին (ժողովուրդը բարեպաշտական զգացմունքներով՝ յաւարս արարողութեան կը համբուրէր ցուցադրեալ նկարը):

Դ. Զիրորդ գիտակը ճաշոց Գիրք կը բովանդակէ: միայն Յարութեան վերաբերեալ չորս ընթերցուածներ՝ Չորս Աւելարաններէն առ ի գործածութիւն տօնական Պատրարազի օրերուն և կը կոչուի «Խողաբերից Աւելարան» կամ «Աւելարան Խողաբեր Կանանց», որոնք Յարութեան առաօպուն նկած էին Գերեզման՝ Յիսուսի մարմինը իդով օծելու: Խնդրոյ առարկայ չորս ընթերցուածներն են.

Ա. Մագիս. 28:

թ. Մարկ. 15, 42-47 և 16, 1-8 (հելպաքրքրականօրէն 9-20 համարները ներառեալ չեն):

զ. Ղուկ. 23, 50-56 և 24, 1-12:

դ. Ցովի. 19, 38-42 և 20, 1-18: .

Այսպիսի ճաշոց Գիրքը կամ Աւելարաններ ընդհանրապէս կը լինէին (և կը լինեն) մեծադիր և արծաթեայ կամ ոսկեայ կողըերու թանկագին կազմով:

Ե. Դինգերորդ գիտանկը Սաղմոսագիրքն է կամ Սաղմոսարանը՝ երկու փարբերակներով, մին ընթերցանութեան և միսը պաշտամունքի գործածութեան համար: Մինչ երոպական լեզուներ առհասարակ կը գործածեն լատիներէն psalterium (յունարեն psalterion=լարային գործիք, քնար) փերմինը, հայեր խառն բառ մը սպեղծած են – Սաղմոսարան, օգլազործելով յունարեն սաղմոս (psalmos) և հայերէն – արան յեփադաս մասնիկով («պարունակող»/«պահարան»): Այս Սաղմոսարանը կամ Գիրք Սաղմոսաց Դաւթի ըստ երեւյյան Դայրուցի կողմանն է եւ փարբերութիւններ ունի պաշտօնական Սաղմոսագիրքն: Դին Սաղմոսարանը անկասկած կը ներկայացնէ Նայ Եկեղեցւոյ հնագոյն Աղօթագիրք-Ծամագիրքը, բաժանուած ութ կանոններու, որոնց վերջառութեան կցուած են ընթերցուածներ, քարոզներ, մալթանքներ և աղօթքներ: Իր Աղօթագիրք՝ Դին Կրտակարանի ամենն շար ընդօրինակեալ գիրքն է Սաղմոսարանը, որ մեզ հասած է հարիւրատը ընդօրինակութիւններով և երթևմն փառաւոր զարդարանքներով<sup>50</sup>:

Ս. Գորոց հայերէն թարգմանութիւնը գերմանական բանասիրութեան կողմէ իրաւամբ զնահապուած է որպէս «Ձ-ազուիի Ձ-արգմանութեանց»: Երկու պատճառներ կամ սկզբ-բարունքներ նպաստած են թարգմանութեան փայլուն յաջողութեան. Առաջին՝ առաելազոյն հաւաքարմութիւն յունարէն բնազրին, և երկրորդ՝ ճշմարիդ արդայայդութիւն բնազրի բովանդակութեան: Այս երկու սկզբունքներու վերայ կարելի էր աւելացնել երրորդ ազդակ մը, որ է գրական ընդիրք հայերէն լեզուի գործածութիւնը: Բնականօրէն ասդ և անդ փոքրիկ թիրիմացութիւններ կամ սիսակ ընթերցումներ պատրահած են, բայց որոնք աննշանակ են և չեն կարող ընդհանուր թարգմանութեան բարձր արժեքը ունել չափով նուազեցնել:

<sup>50</sup> Իմ ասձնական գրադարանի մ.ջ ունիմ այսպիսի մի Սաղմոսարան՝ «Գիրք Սաղմոսաց Դաւթի» փիլոդոսական գրքով, պատճառ յերուսաղեմ 1870 թուին:

#### 4. Ս. Գիրքը որպէս աղբիւր քրիստոնէական արուեստներու

Ինչպէս այլ երկրների մէջ, նաև հայ ժողովրդի պարագային, Ս. Գիրքը, մասնաւորաբար Նոր Կրտակարանը, ներշնչման աղբիւր հանդիսացած է զրականութեան և արուեստներու: Բնականօրէն Ասպուածաշունչ Գիրքը մնձ ազդեցութիւն գործած է յափկապէս հայ մաքենագրութեան վրա: Ասպուածարանութիւն, փիլիսոփայութիւն, ճառեր և քարոզներ, ինչպէս և մեկնութիւններ՝ նիւթեր և պատմութիւններ, պատկերներ, խթան և զաղանարներ քաղած են Ս. Գիրքէն և հարսպացուցած հայ գրականութիւնը: Ցիրալի, ոչ միայն այս մասնագիրական մարգերու, այլև պարմագրութեան մէջ Ասպուածաշունչ Գիրքը կարեւոր դեր խաղացած է: Կորիւն Սրանչելին իր ուսուցչի Վարքի մէջ երկար յապուած մը յափկացուցած է Մաշփող՝ Մովսէս մարգարի: Իեպ նմանութեան և համեմարութեան: Մովսէս Խորենացի հայ ժողովրդի ծագումը առնչած է Յաքեթի սերունդէն («Ձ-որգոմի») հետ: Իրեն հետեւած են մի շարք պարմագիրներ: Անկասկած մասնաւորապէս կրօնական-ասպուածարանական գրականութեան մէջ մնձ եղած է Ս. Գրոց ազդեցութիւնը: Նշանաւոր հեղինակներ և հեղինակաւոր զործեր լայնօրէն օգրագործած են Հին և Նոր Կրտակարանները և անոնց վկայութիւններով ճնշացուցած իրենց գրութիւնները: Ցիշարակութեան արժանի են. Մաշփոց Վարդապետ («Յաճախապարում» և շարականներ), Սահակ Պարթև (շարականք և կանոնը), Յովհան Մանդակունի Հայրապետ (478-490), Յովհան վարդապետ Մայրագոմնեցի (Ճառեր, Է. դար), Յովհան Օձնեցի Կաթողիկոս (717-728), Գրիգոր վարդապետ Նարեկացի (951-1003/1005), Ներսէս Շնորհալի Կաթողիկոս (1166-1173), Գրիգոր վարդապետ Տաթևացի (1346-1409) և այլք: Նարեկացի հեղինակած է փաղեր, Մեկնութիւն «Երգ Երգոց» մատեանի և մասնաւորաբար Նարեկ համբաւաւոր աղօթագիրքը, որ լի է հարիւրաւոր սուրբգրական պիտառութիւններով:

Անջուշը հայ գրականութեան մի կարեւոր մասը կը կազմեն շարականներ, երգեր, լրադեր և մեղեդիներ, որոնք նմանապէս լայն առնչութիւն ունին Ս. Գրոց հետ: Նազոյն կը նկապուին Ապաշխարութեան շարականները, որոնք կը վերագրուին Մեսրոպ Մաշփոցի: Նաև Սահակ Պարթև Հայրապետ, որ ղեկավարած է Ս. Գրոց թարգմանութիւնը և մասնակցած աշխարհանքին, յօրինած է շարականներ և մշակած կանոններ: Բացառիկ յաջող գործ մըն է Ս. Դոփիսիմեանց նուիրեալ «Անձինք նուիրեալք» շարականը, զոր յօրինած է Կոմիքաս Աղցեցի Կաթողիկոս (615-628), 36 լուսներով՝ ըստ հայկական Այրութենի: Ձե՛լ բովանդակութեամբ և թէ՛ եղանակով մնձապէս փայլուն երեւոյթ մըն է, որ հայկական Շարակնոցի մէջ իւր յափուկ լրեղը ունի: Սակայն անկասկած հայ հոգեւոր երգի և շարականներու վարպետն է և կը մնայ Ներսէս Շնորհալի Հայրապետ, որ բազմաթիւ երգեր, շարականներ, փաղեր և մեղեդիներ գրութեամբ և եղանակներով յօրինած է և մնձապէս ճնշացուցած է Հայ Եկեղեցոյ ժամերգութիւնը: Հայոց Ժամագիրքը շաբ պիտի աղքաքանայ, եթե նրանից հեռացնենք Շնորհալու սփեղծագործութիւնները: Ասդ արժան է յիշարակել նաև Սպեհիանոս արքեպոս. Սինեցին (688-735), որ ոչ միան Չորից Անեփարանչաց լաւա-

գոյն մեկնութիւնը գրած է, այլև «կանոն»-ի կառոյցը ներմուծած Հայ Եկեղեցոյ ժարակն ցի մէջ<sup>51</sup>:

Մինչտ ԺԼ. դար հայկական արուեստի բոլոր ճիշերը իրենց ծնունդն ու սնունդը առած են քրիստոնէական կրօնքն, որու հիմքը կը կազմէ. Ս. Գիրքը, յարկապէս Նոր Կրակարանը: Ոչ միայն մասրանկարչութիւնը, այլև ճարփարապեկութիւնը, քանդակագործութիւնը, սրբապատկերներու նկարչութիւնը, որմնանկարչութիւնը, ինչպէս և խաչքարերու, խորանի զարդերու, Պատրարազի զգեստներու և վարագոյններու պատրաստութեան արուեստները կը կրեն Քրիստոնէութեան կնիքը: Հայ ժողովուրդը կարող է իրաւամբ հպարփ զգալ մասնաւորաբար մասրանկարչութեան, ճարփարապեկութեան և երաժշտութեան արուեստներով, քանզի այս մարզերու սրեղծագործութիւնները թէ՛ քսնակութեամբ և թէ՛ որպէս բարձրութեամբ և ինքնապիսութեամբ կարող են մրցի բիւզանդական և երոպական լաւագոյն նմանակներուն հետ:

Ինչպէս այլոր, նաև Հայաստանի մէջ նոր քրիստոնէական կրօնի աղօթափուները հիմնուած են եերանոստական բազիլիկա-վաճարներու վրայ: Ե. դարից սկսեալ հայ ճարփարապեկներ մրածած են աղօթավայրերու առասպանները բարձրացնելու և զմբեթով ու կամարներով դէափ երկինք ուղղելու: Իրանի, Միջազգեպրի, Միրիոյ և Հայաստանի ճարփարապեկները որոշ փորձառութիւն ունեն կամարներու կառուցման կամ գործածութեան մէջ: Ուստի Արեւելքում Անդիքը, Ակեքաննորիս և Հայաստան, որոնք շինարարական արուեստի հին աւանդոյթներ ունեին, ճարփարապեկական կենդրուններ հանդիսացան: Բնականորէն Արեւելքու մէջ՝ Հռովմ, որ անդիկ ժամանակներու կենդրոն չըն էր, աւանդոյթները շարունակեց նաև քրիստոնէական արուեստի մէջ: Հայաստան անշուշտ նպաստարութեալով ուրարդական ճարփարապեկական ժառանգութենէն, Ե.-Զ. դարերուն արդէն զմբեթաւոր և կամարակապ եկեղեցիներ սկսան կառուցանել: Ս. Գրիգոր Լուսաւորչի վեսիլը և այդ շրջանին մնացեալ վաճարները կարեւոր վկայութիւններ են: Եթէ Ենոքէֆ Սպրտիզովսկի իր Հայոց շինարարական արուեստը և Երոպա<sup>52</sup> գրքին մէջ հայկական ճարփարապեկութեան դերն ու ազդեցութիւնը կը չափազանց, անվիճնի է, թէ հայերն էին, որ առաջին անգամ թքուուի երկարեցրին կամ բարձրացուցին՝ համեմարտաբար բիւզանդականին, եւ թէ ոռմանական և վաղդորթական ճարփարապեկական ծեւերը Հայաստանի մէջ, մասնաւորաբար Անիում, աւելի կանուխ շրջանին գրանելի են, քան Արեւելքու մէջ: Առ այս արուեստի պատրմութեան մասնագելք Դահիր Տալբով Ռայս կը հաստապէ.

«Կը թուի թէ վաղագոյն հայկական եկեղեցիները կամարաւոր բաղիկաներ եղած են: Սակայն, ըստ Երևոյթին, հայ ճարփարապեկներն էին, որ կամարակապ քառակուսի յարակազծի մշակմամբ աւելի կանուխ եկարքրուած են, քան այլուր, և Է. դարէն սկսեալ մի շարք լուրդակներ այս յարակագծով՝ կարելի է գրանել»<sup>53</sup>.

<sup>51</sup> Մեսրոպ Վրու. Գ. Գրիգորեան, Սպիտակոս Սիմեոնի, Պևոռութ, 1958:

<sup>52</sup> Josef Strzygowski, Die Baukunst der Armenier und Europa, 2 Bände, Kunstverlag Anton Schroll und Co. Wien 1918.

<sup>53</sup> David Talbot Rice, Art of the Byzantine Era, Thames and Hudson, London 1963, 139, 145.

## 5. Վաղագոյն հայկական մանրանկարները

Ե. դարից դժբախտաբար մանրանկարներ մեզ չեն հասած: Դայ Մանրանկարչութեան պալմութինը կը սկսի Զ. դարու ջրու մեծադիր նվարներով՝ մազաղաթեայ երկու թերթերու վրայ, որոնք «Էջմիածնի Աւելարան»ի (Մատենադարան թ. 2374-989 թուականից) վերջաւորութեան իր պահպանակ դրուած են:

1. Աւելումն Զաքարիայի (թղ. 228ա)
2. Աւելումն Մարիամու (թղ. 228բ)
3. Երկրպագութին երեք մողերու (թղ. 229ա)
4. Մկրտչութին Յիսուսի (թղ. 229բ):

Այս պարկերները հրաշագեղ գոյներով և արուեստով նկարուած են և որոշ չափով կը յիշեցնեն եզիպահական մումիաներու դիմանկարները և կամ Սինայի Վանուց վաղ բիւգանդական իկոնաները, բայց անշուշփ իմբ ունեցած պիտի լինեն ուրարդական-հայկական նկարչական աւանդութինը: Բնականօրէն ուրարդական որմնանկարչութինը, որմէ նմուշներ մեացած են Էրեբունիի բամարին և պալատին մէջ, մասսամբ զոնտ ազդեցութին գործած է Հայաստանի նոր քրիստոնէական արուեստին վրայ: Ուրարդական պարկերներու և Զ. դարու ջրու մանրանկարներու իր գուգահեռական կարելի է նշել Լմբադայ և Արուճի փոքր եկեղեցիները, կառուցեալ Է. դարուն: Մանրանկարչութեան այս կերպարուեստը կամ աւելի ճիշդ՝ արուեստակերպը կը գդնենք նաև Մլրէ թագուհոյ Աւելարանին (862) մէջ, որ կը պահուի Վենետիկոյ Միխիարեան Վանուց Գրադարանին մէջ (Զեռագիր թ. 1144 / 86):

Մինչ չորս հայկական հնագոյն մանրանկարներ աւելի եզիպահական-բիւգանդական ազդեցութին կը ցուցադրեն, Էջմիածնի Աւելարանի (989 թ. – հմք. 2374 Զեռագիր Երեւանի Մատենադարանի) պարկերները որոշ նմանութիւն կը ցուցաբերեն Ռաբբուլայի Աւելարանի (586 թ.) հետ, որ սիրիական կամ ասորական աւանդութեան կը պարկանի: Հայկական ձեռագիրը կը պարունակէ: մի շաբը հրաշագեղ գունազարդ մանրանկարներ, որոնց մէջ փիրապես է կարմիրը, բայց այլ գոյներ կամ ներկեր եւս գործածուած են: Ցիշափակութեան արժանի են՝ Եւսեբիոսի նամակը, Համարարքարի յոթ կանոնափախստակները, Քրիստոս զահի վրայ՝ Պետրոս և Պողոս առաքեալներով շրջապարուած, չորս Աւելարանիները, Մարիամ Աստուածածին զահի վրայ՝ Յիսուս Մանուկ գրկին, Խսահակի զոհաբերութիւնը, ինչպէս և բազմաթիւ լուսանցազարդեր՝ թոշնոց, կենաց ծառի, ծաղիկներու ու բոյսերու պարկերներով: Մինչ չորս վաղագոյն մանրանկարները իրենց ձեւերով և գոյներով աւելի մոնումենտալ կերպարանք ունին և խոր պապաւորութիւն կը գործեն, Էջմիածնի Աւելարանի պարկերները մասնաւորապէս յափակ են և վայելու, և պայծառ կամ ուրախ գոյներով ծշակուած, բայց նաև այնպիսի արուեստի ոճով, որ աւելի անդիկ ժամանակաշրջանը կը յիշեցնէ<sup>54</sup>: Բոլոր մանրանկարները հետաքրքրական են և փառահեղ, բայց մասնաւորաբար այն պարկերը, որ Աստուածածին Մարիամը կը ներկայացնէ Յիսուս Մանուկի հետ՝

<sup>54</sup> Էջմիածնի Աւելարանի նոր նմանափիպ (facsimile) հրարապահութիւն մը հրապարակեց Աւստրիոյ Գրաց քաղաքի Akademische Druck- und Verlagsanstalt, 2001 թուին. հիք. Ա. Բնագիր, հիք. Բ. մնկնադարներին՝ ուսումնասիրութեամբ Հայոյ, և Ներմուգ Բուշառովը ամուսիններու:

զահի վրայ: Մինչ այլ պակերներու մէջ նա երեխան ճախս կողմի վրայ կը կրէ, ինչպէս Արքիանապուսյ 1007 թուի Աւելարանին (Ձեռ. թ. 887/116 Վենեփրկոյ Մխիթարեան Հարց) մէջ, այսուեղ Էջմիածնի ծեռագրում Մարիամ երկու ծեռքերը բարձրացուցած՝ գրկին մէջպես դը նստեցուցած է Յիսոս Մանուկը, որ նմանապէս աջը դէպի վեր երկարած է և ճախս ծեռքին մէջ խաչ մը ունի: Ամքի արքայայբութիւնը և նստելու կերպը նկատի առած՝ Յիսոս երեխայ մը չէ, այլ հասուն մի երիբասարդ (հմմդ. Աղթամարի Ս. Խաչ եկեղեցոյ արքային պապին վրայ քանդակուած պարկերին հետք - Ասքուածածին զահու վրայ՝ Յիսոս Մանուկի հետք): Արդարեւ և իրաւամբ կարելի է եզրակացնել, թէ Էջմիածնի Աւելարանը բացառիկ կարեւոր դեր կապարած է հայ մանրանկարչութեան զարգացման և պարմութեան մէջ: Զ. դարու չորս մանրանկարները իրայապուկ ուղղութիւն մը սպեղծած են, և Էջմիածնի Աւելարանի պարկերները՝ մի դարբեր ուղղութիւն, բայց երկուոք ես որպէս օրինակ կամ կաղապար ծառայած են բազմաթիւ արուեստագէտներու համար: Եւ այսպէս, Հայաստանի դարբեր նահանգներու կամ շրջաններու մէջ մանրանկարչական դպրոցներ յառաջացած են՝ ոճի, արքայայբութեան և գոյններու դարբեր յափկութիւններով, ինչպէս օրինակ՝ Վան-Վասպուրականի, Մուշի և Բաղեշի, Կարնոյ և Երզնկայի, Մեծովիի, Հաղբար-Սանահինի, Տաթեսի և Գլածորի, Անիի մէջ և այլուր: Նաեւ Արքասահմանում դարբեր մանրանկարչական և գրչագրական դպրոցներ սպեղծուած են, ինչպէս՝ Կիլիկիա, Կ. Պոլիս, Ղրիմ, Հալէպ, Երուսաղեմ, Նոր Ջուղայ և այլուր, որոնք Հայոց Մանրանկարչութեան կարեւոր և արժեքաւոր նպաստ բերած են:

## 6. Համանուագ քարի և մագաղաթի վրայ

Ասդ նկարի պիտի առնեմ Ձ.-Ծ. դարերու շինարարութեան և մանրանկարչութեան երկու հրաշափառ սպեղծագործութիւններ Վասպուրական նահանգի մէջ, Ծին Հայաստանի մի երկրամաս, որ կենքրոն մըն էր ուրարտական արուեստի և մշակոյթի: Վան-Տուշպատ-Տոսպ մայրաքաղաքն էր Ուրարտական Հարստութեան, որ սկիզբ առաւ Ժ/Թ. դարուն (Ք. ա.) և փոլ Եկա Զ. դ. (Ք. ա.), երբ Հայեր կամ Արմեններ հանդէս եկան պարմութեան բեմի վրայ: Նկարչութեան կամ մանրանկարչութեան առնչութեամբ նկարի ունիմ Մլը թագուհուն Աւելարանը, որ շ. 850-51 թուին, յամենայն դէպս 862-էն առաջ իրազործուած է և որ ամբողջական էջի վրայ մնջաղիր հրաշագեղ պարկերներ կը պարունակէ՝ հիսարանչ ներդաշնակութեամբ: Սոյն Աւելարանը կը պահուի Վենեփրկիկ Մխիթարեան Հարց Գրադարանին մէջ (Ձեռ. թ. 1144/86) և ունի 11 մանրանկարներ մագաղաթի վրայ. ութ պատկերներ կորսուած են: Նկարները կը ներկայացնեն Եւսեբիոսի նամակը, դասը համարաբառ կանոնադասարականներ, չորս Աւելարանինչներու պարկերներ և Քրիստոսի Համբարձումը: Մասնաւրաբար Համբարձման նկարը արժանացած է և արժանի բարձր ուշադրութեան և զնահափութեան և կը պարկանի աւելի Էջմիածնի Աւելարանի Զ. դարու չորս մանրանկարներու աւանդութեան, այսինքն ուրարտական և եզիսպական-բիզանդական ուղղութեան: Նմանութիւնը կամ ազդեցութիւնը կու գայ հաւանաբար հնագոյն Սինայի իկոնաներից, ինչպէս Սինայի Վանոց Triptychon-ի միջին բախտակը, որ կը նկարազրէ: Համբարձ-

մաս դիսարանը՝ Ձ. ու Ժ. դարից: Ուշ շրջանի մի իկոնայի<sup>55</sup> (ԺԵ. դ.), որ Լոնդոնի «Վիկոր-րիա և Ալբերտ Թանգարան»ին մէջ կը պահովի, որոշ նմանութիւն մը կը ցուցադրէ: բայց համեմափարաք Մլրէ թագուհիյ Անդարանին՝ նաեւ մի քանի դարբերութիւններ: Համեմափուրթինը<sup>56</sup> Ռաբրուլայի համրածանօթ Անդարանին հետ ցոյց կու դայ կարեւոր դարբերութիւններ երկու մանրանկարներու միջեւ:—

1. Ռաբրուլայի<sup>57</sup> Անդարանին մէջ հինգ հրեշտակներ բռնած են Mandorla-ն, որուն մէջ Քրիստոս նկարուած է կանգուն. իրաքանչիւր կողմը կանգնած են երկու հրեշտակներ (մին վերը, միաւր վարը) և հինգերորդ հրեշտակ մը ցորս թեւերով՝ ներքեւից կը պաշտպանէ: Մլրէ թագուհիյ Անդարանի Համբարձման մանրանկարին մէջ՝ երկու հրեշտակներ զինտրի նման պահակ կեցած են Mandorla-ին երկու կողմերը և երկու այլ հրեշտակներ թռչելու դիրքով՝ պարկերը ներքեւից բռնած:

2. Մլրէ թագուհիյ Անդարանի պարկերի մէջ Յիսուս նստած է զահի վրայ՝ աջը կրծքի վրայ և ձախ ձեռքին ունի Ս. Գիրքը կամ Անդարանը: Ռաբրուլայի Անդարանի «մանդորլայ»ի մէջ Քրիստոս կանգնած է և աջ ձեռքը բարձրացուցած:

3. Ռաբրուլայի Անդարանի մանրանկարին մէջ երկու հրեշտակներ հեռու կը պահեն Առաքեալները Մարիամ Աստուածածնեն և ցոյց կու դասի դէահի վեր՝ ինչպէս Յիսուս երկնք կը բարձրանայ: Մլրէ թագուհիյ Անդարանի պարկերին մէջ հրեշտակները կը պակսին:

4. Ռաբրուլայի Համբարձման նկարին մէջ Աստուածածնը ճիշդ մէջփեղը կանգնած է, ուղիղ կը նայի՝ ձեռները բաց, սակայն ցած. մինչդեռ հայկական մանրանկարին մէջ Մարիամ դէահի ձախ կը նայի՝ ձեռները բարձրացուցած:

5. Մլրէ թագուհիյ Անդարանին մէջ Առաքեալները վեց-վեց Աստուածածնայ երկու կողմերը շարուած են և կը նային ու միդիկ կ'ընեն. մինչդեռ Ռաբրուլայի նկարին մէջ՝ Առաքեալները երկու խումբ կազմած, զարմանալով կը նային Քրիստոսի, ինչպէս աշխն՝ հրեշտակը դէահի վեր ցոյց կու դայ:

Մլրէ թագուհիյ Անդարանի մանրանկարներու մասին Շ. Մեսրոպ ճանաշեան իրաւամբ կը հասպաքէ, թէ իրենց նկարազրով կը պարկանին մի այնպիսի ժամանակաշրջանի (Ձ. դար), երբ կարծէք Ե.-Զ. դարերու արուեստի վերածնունդ մը կը յառներ<sup>58</sup>:

«Համանուագ»ի երկրորդ մասը սպենդագործութիւն մըն է քարի վրայ, այսինքն Վանայ ծովու Աղյամար կղզիի Սուրբ Խաչ եկեղեցին, որ նոյնավու կը գտնուի Վասպուրականի նահանգին մէջ, և որ Մլրէ թագուհիյ Անդարանը ևս պատրաստուած է և նկարազարդուած: Այս նահանգի մէջ էր, որ 908 թուին իշխան Գաղիկ-Խաչիկ Արծրունի, որդի Գրիգոր-Դերենիկի, ինքզինք թագաւոր հոչակեց, թէալէկ այդ ժամանակաշրջանին (895/96-1045)

<sup>55</sup> Byzantium-Treasures of Byzantine Art and Culture, edited by David Buckton, British Museum Press 1994, 221-23, reproduction No 235.

<sup>56</sup> Armenien-Kunst und Geschichte im 1. Jahrtausend (anlässlich einer Armenien-Ausstellung), hrsg. von Erwin M. Ruprechtsberger, Linz 1989, 47-49.

<sup>57</sup> Ibid. Abb. Nr. 9 (S. 59); Antoine Khoury Harb, The Maronites, History and Constants, Beirut 2001 (at the end of the Book).

<sup>58</sup> Mesrop Janashian (editor), Armenian Miniature Paintings of the Monastic Library of San Lazzaro, 1<sup>st</sup> vol. Venice 1966, miniatures Nos 12-33; commentary 16-23 (22-23).

Բազրապունեաց Հարսփոթիւնն էր, որ կը փիրապեսիր Հայաստանի մէջ (Արծրունեաց Թագաւորութիւնը Վերջացաւ 1021 թուին): Արծրունի առաջին թագաւոր Գևագիկ-Խաչիկ 915-921 դարիներուն կառոյց Աղքամար կղզիի Ս. Խոաչ վանքն ու եկեղեցին. իր երկրորդ դիմիսը՝ Մլրէ թագուիին էր, որ շուրջ 908 թուին Անեփարանը սփացաւ կամ զնեց և նուիրեց Վարագայ վանքին: Աղքամարի եկեղեցին հսկապէս ճարպարապելական գոհար մըն է, որոյ մէջ ոչ միայն հայ շինարարական արուսդի աւանդական ձեւերն ու դարբերը, այլև արարական-իրանական-իշլամական ազդեցութիւններ ներդաշնակօրէն միաձուլուած են: Այս առնչութեամբ արուեսդի պարմութեան մասնագէտ Կաթարինա Օթոյ-Դուռ յարկապէս Աղքամարի զարդարանդակներու մասին կը գրէ. «Զարդարանդակը ոչ միայն Արևամուգըի քանդակագործութեան նախակարապեսն է, այլև Արեւելեան Անապուի մէջ քրիստոնէական և իսլամական աշխարհներու հանդիպման խօսուն վկան»<sup>59</sup>:

Քարի և մագաղաթի վրայ համանուագի երկու բաղկացուցիչ դարբերը կամ մասերը, Մլրէ թագուիւյ Անեփարանը և Աղքամարի Ս. Խոաչ եկեղեցին անկասկած Վասպուրականի մէջ արուեսդի գեղեցկագոյն սպելծագործութիւններն են:

Ասպրիոյ մէջ Շէօնգրաբենի (Schöngraben) եկեղեցւոյ քանդակները, արքաքին պատի վրայ, հեփաքրքրականօրէն կը յիշեցնեն Աղքամարի Ս. Խոաչ եկեղեցւոյ զարդարանքները:

## 7. Մաշփոց Վարդապետ հոգեւոր ծառայութեան մէջ

Կորին Սքանչելիի համզմամբ՝ Մաշփոց Վարդապետ հայկական Այրութենքը սպելութեան հիմնականօրէն քրիստոնէական քարոզզութեան նպարակի համար: Մովսէս Խորենացի իր Պարմութեան մէջ կը նշէ: Նաև քաղաքական պարճառարանութիւնը: Ճշմարգութիւնը հաւասնօրէն կը գրնուի երկու ազդակներու մէջ հաւասարապէս:

Կորինի վկայութեամբ՝ Մեսրոպ Մաշփոց Այրութենքի յօրինումէն առաջ և նոր գրաղեաց աւելքարանչութեամբ կամ քրիստոնէական կրօնի քարոզզութեամբ: Ս. Գրոց առաջին թարգմանութիւնը ամենաուշը աւարդապ պիփի ըլլայ 410/415 թուին. երկրորդ թարգմանութիւնը կամ հիմնական Վերագրեսութիւնը ըստ յունական սփոյց և անթերի օրինակներուն՝ կարարուած պիփի լինի 432-435 դարիներուն: Ենթեարաք, 410-430 և 435-439 Ս. Մաշփոց շուրջ 25 դարի ժամանակ ունեցած գրական և մանաւանդ անեփարանական գործերով: Կորին կը յիշէր Գոռջան գաւառը, «կողմանք Մարաց», Սիւնեաց աշխարհը և Բիզանտիական Հայաստանը, բայց վսփահօրէն Վարդապետը շրջեցաւ երկրին բոլոր զիսաւոր կենդրունները և քարոզեց Անեփարանը<sup>60</sup>: Առ այս վարքագիրը մի քանի անգամ կը նկարագրէ և բարձրօւն կը գնահապէտ Մաշփոցի քարոզչական գործունութիւնը<sup>61</sup>:

Օրինակի աղազաւ.-

«Ապա դարձեալ ելանէր, շրջէր գրեղեօք կարգելովք և զզաւառօք աշակերտելովք աշխարհին Հայոց, գուարթացուցանել, նորոգել և հասպարել: Եւ յորժամ այնպէս ընդ ամենայն փեղիս լի առնէր զՍուրբ Ան-

<sup>59</sup> Katharina Otto-Dorn, Kunst des Islam, Baden-Baden 1964/1979, 75.

<sup>60</sup> Կորին, Վարդ Մաշփոցի, Խոյն անդ լ. 40, 54, 58, 60, 62, 64, 72, 78, 82:

<sup>61</sup> Խոյն անդ, լ. 54, 58, 78, 82:

փարան Տեառն և ամեննցուն զգուշացուցեալ զիենաց ճանապարհն վարելոյ, խորհուրդ տանելը այսուհետեւ վասն կէս ազգին հայոց, որ էր ընդ իշխանութեամբ թագառորին «ոռոմոց»<sup>62</sup>:

Եւ ահա այսպէս Մեսրոպ Մաշորոց, որ Հայոց Վրշակումնաց թագաւորութեան զիենուորական ծառայութեան մէջ կը գրենուր՝ Խոսրով և Վրամշապոնի արքայից ժամանակաշրջանին, թագառիկ և ճակարագրական դեր կարարեց հոգեւոր առաքելութեան և ծառայութեան մէջ, «ի ծեռն առեալ … ասպուածագրոծ մշակութեամբ զաւերարանավան արուեսդը՝ ի թարգմանել, ի գրել և յուսուցանել» ևն<sup>63</sup>: Նրա բազմարդին գործունեութեան շնորհի հայացու ոչ միայն Ս. Գիրը, այլև առհասարակ Քրիստոնեութիւնը ի Հայաստան աշխարհի: Նոր Այրութենքը և Քրիստոնեութեան հայացումը մեծապէս նպաստեցին թէ՝ հայ ժողովրդի հոգեւոր-միրաւորական կեանքի բարձրացման և թէ՝ հայկական ինքնութեան պաշտպանութեան և պահպանութեան՝ ընդդէմ բազմապեսակ օրբար մշակութային ազդեցութիւններու և ձուլման ջանքերու և ճնշումներու:

### Վերջարան

Յընթացս դարերու հայ ժողովուրդը, հակառակ թագում դժուարութեանց, ճնշումներու և կորուրածներու, հաւափարիմ մնաց Սուրբ Մեսրոպային և անոր սպիտակած Այրութենին, և Այրութենը պահապան հրեշտակը եղաւ ժողովուրդին: Հայ մայրերը մինչեւ իսկ 1915–1918 թթ. Յեղասպանութեան և Վրսորի ժամանակ, Դեյր Զօրի անապարին մէջ՝ աւազի վրայ երեխաններուն գրեցին և ստվորեցուին Մաշորոցի գրերը:

Յաւարփ մեր ոտումնասիրութեան՝ կը ցանկանայի պարասխանել այն հարցին, թէ ով կարող է նկարուել Հայոց պարմութեան մեծագոյն դէմքը: Հայաստանի մէջ Քրիստոնեութեան պետքական կրօն հոչակման 1700-ամեակի առթիւ Մայր Վրսոր Ս. Էջմիածինը պարաւագած էր մի զորք՝ իրը յիշարակ, որի վրայ կ'երեւան Սահակ Կաթողիկոս, Մեսրոպ Մաշորոց և Վրամշապոնի թագաւոր: Բնականօրէն գլսարանը կը վերաբերի հայոց Այրութենի սրեղծման, սակայն ևս փնտրում եմ մի ընդիհանուր լուծում: Գերմաններէն մի ասացածք իրաւամբ կը հասպարէ: «Բոլոր լաւ բաները երեք կը լինեն»: Ս. Մեսրոպի կողքին՝ Սահակ Պարթև Հայրապետ կը ներկայացնելը Հայոց Եկեղեցին կամ հոգեւոր աշխարհը, իսկ Վրամշապոնի՝ պետքական կամ քաղաքական կեանքը: Հարց կը ծագի արդարեւ, թէ արդեօք հոգեւոր ոլորտի մէջ կա՞յ մի այլ անձնաւորութիւն, որ անկասկած և անվիճելի կերպով կրնայ համարուի հայոց եղուաւոր-Եկեղեցական պարմութեան մեծագոյն դէմքը: Ես կը խորհիմ, թէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ, որ Տրդար թագաւորի աջակցութեամբ Հայաստան աշխարհը պաշտօնական-պետքականօրէն շաղկապեց Քրիստոնեութեան հետի, բնագդարար հայ ժողովուրդի կողմէ ընդունուած է որպէս հայութեան կրօնական-Եկեղեցական մեծագոյն դէմքը: Կը մնայ որոշել հայ քաղաքական կեանքի մեծագոյն անձնաւորութիւնը: Այս հարցում ես ժողովրդի և գիրնականների մօր որոշ համաձայնութիւն կամ համոզում կայ, որ

<sup>62</sup> Նոյն անդ, լ. 64:

<sup>63</sup> Նոյն անդ, լ. 54:

Մեծն Տիգրան արքան /95-55 թթ. Ք.ա./ Հայոց քաղաքական պարմութեան մեծագոյն դէմքն է, որ հումկու Հռովմի դէմ պայքարեցաւ և մինչեւ իսկ յաջողեցաւ որոշ ժամանակ իշխել Հայաստանին դուրս՝ Մերձաւոր Արևելքի երկրների վրա: Եզրակացութիւն.

1. Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետ հայ հոգեւոր-նկեղեցական կեանքի մեծագոյն դէմքը.
2. Ս. Մեսրոպ Մաշտոց Վարդապետ հայ զրի և դպրութեան մեծագոյն անձնաւորութիւնը.
3. Տիգրան Մեծ հայ ժողովրդի քաղաքական պարմութեան մեծագոյն դէմքը:

Այս երրորդութիւնը կարելի է իրասամբ նկատել և փառաբանել որպէս Հայոց պարմութեան մեծագոյն երեք անձինք. որոնք որոշած են հայ ժողովրդի ճակապագիրը:

Սիամանթոյի խօսքով կ'աւարդին Ս. Մեսրոպի նուիրեալ իմ համեստ ուսումնասիրութիւնը.

*Մեսրոպ, հայ դարերու դիմաց կեցող՝*

*Դուն աղամանդեայ ապատաժ:*